

ԻՄ “ՆՈՒԱԳՆԵՐ”ԻՑ

* *

Իմ հարազատ , հէգ եղբայրը

Հառաչում էր ու լալիս .

Նա յուսահատ հեկեկում էր ,

Թշուառ գլխին վայ տալիս :

Նորա դառն տանջանքներից

Սիրտըս ցաւեց ու այրւեց .

Նորա ողբից լոյս-երկինքը

Գլխիս մթնեց , խաւարեց :

Խնդրեցի քեզ , չքնաղ Փերի՛ ,

Որ վշտերըս ամոքես .

Աղաչեցի , որ քո սիրով

Իմ ցաւերը ըսփոփես :

Բայց , օ՛ անգո՛ւթ , դու մնացիր

Լեռ քարի պէս անտարբեր .

Սառնութեամբըդ ցաւիս վերայ

Աւելացրիր նոր ցաւեր :

* *

Երբ լուսինը գեղածիծաղ՝

Ամպերի մէջ լողալով ,

Հանդարտ ու վեհ ընթանում էր ,

Արծաթի պէս շողալով —

Պատշգամբում , գետի ափին ,

Նստած էինք երկուսով :

Ոչ ոք չը կար : Գեղ լուսնեակն էր

Միայն ներկայ իւր լուսով :

Դու հիացած , ուրախ , զըւարթ՝

Նայում էիր երկնքին .

Իսկ ես տխուր նայում էի

Հրեշտակային քո դէմքին :

Նւ այդ դառն տանջանքներիս

Խորհրդաւոր գիշերը

Ուղում էի մի վարդ քաղել ,

Բայց ծակեցին փըշերը . . .